



Պատրաստված

և ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵԶԱՆԻ ՎԱՔԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ ՎՐԱ

Ա. ԴԻԿԱՐՅՈՎ



Լենինականի Մայիսյան ապստամբության
անվան տեխնիկ կոմբինատի մանածագործական ֆաբրիկա

«Ն» և «ԱՏՄ—5» տիպի մանածագործական հաստոցների վրա մասրաները (шпунц) փոխարինելու ժամանակ երբ նրանք դուրս են նետվում, հաճախ չեն թափվում ենթամարտկոցային արկղները և նրանց մի մասը ընկնում է հատակի վրա: Թեզանի (уток) թելի կտրվելու դեպքում դա կեղտոտում և փչացնում է թեզանի մանվածքը:

Հատակի վրա մասրաների ընկնելը կանխելու համար «Ն» տիպի հաստոցների վրա տեղադրված են տապատավոր զսպանակներ, իսկ «ԱՏՄ—5» տիպի հաստոցների վրա՝ ուղղատու վաքեր (по-

ток), բայց նրանցից ոչ մեկը լիովին չի կատարում իր դերը: Բացի դրանից, նրանք շատ հաճախ են կոտրվում:

Մանածագործական ֆաբրիկայի նորոգող բանվոր Կարլեն Մանսվյանը առաջարկել է ուղղատու վաքի նոր կոնստրուկցիա, որը կազմված է հետևյալ դետալներից (տե՛ս նկ. 1). 1. վահանակ, որին եռակցված է շրջանակը, 2. առանցք, որին ամրացված են վահանակի բոլոր դետալները, 3. օղակ, 4. կառանիչ բոլտ, որը օղակն ամրացնում է առանցքին, 5. վաքի զրու-



Նկ. 1.

պանակ, 6. բոլոր, որը զսպանակն ամրացնում է առանցքին:

Հաստոցի վրա վաքը տեղադրվում է հետևյալ ձևով: Հաստոցի շրջանակին ամրացվում է մի կալոմնակ, «ԱՏՍ—5» հաստոցների վաքերի համար օգտագործվող կալոմնակների տիպի: Կալոմնակի մեջ դրվում է մի առանցք, որն ամրացվում է սեղմիչ բոլորով: Առանցքին հաղցվում են սեղմիչ բոլորով օղակը, վահանակով շրջանակը և վահանակի զսպանակը, որի մի ծայրն ամրացված է առանցքի մեջ ներպատված բոլորի գլխիկում և մյուս ծայրը՝ վահանակի փոքրիկ կեռին:

Զսպանակի ձգման կարգավորումը կատարվում է օղակի միջոցով: Վահանակի կարգավորումը բառանի նկատմամբ, երբ նա գտնվում է առջևի դիրքում, կատարվում է կալոմնակում առանցքը շրջելու միջոցով:

Կ. Մանուկյանի կոնստրուկցիայի վահանակներն ունեն հետևյալ առավելությունները. 1) նրանց պատրաստումը էժան է, 2) մասրային ալիս են վերջնական լավ ուղղություն՝ դուրս նետելու ժամանակ, 3) մեկուկես տարվա շահագործման ընթացքում ոչ մի վաք չի կոտրվել:


ԿԱՄՐՁԱԶԵՎ ԱՄԲԱՐՁԻՉԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻԶԸ

Բ. ԱՎԱԳՅԱՆ


Ինժեներ

Սովորաբար մի կողմի վրա գտնվող բեռները ճոպանով կապելիս, բանվորները ստիպված են լինում կեռը հեռացնել ապահովիչների թաթերից, որը հանգեցնում է մետաղաճոպանի հաճախակի կտրվելուն:

Ձեռփինակու անվան գործարանի ուսյիտնալիզատոր Օ. Մարգարյանն առաջարկել է բարձրացվող բեռների նոր սահմանափակիչ, որը տարբեր հաստոցների վրա ապահովում է անվթար և



Նկ. 1. Սահմանափակիչ մինչև կատարելագործումը
1. Կոնտակտներ, 2. Կոնտակտային բիբեղ, 3. Զրպանակ, 4. Զող, 5. Բաք, 6. Թաթի առանցք, 7. Մետաղաճոպաններ:



Նկ. 2. Սահմանափակիչը կատարելագործումից հետո:

1. Կոնտակտներ, 2. Կոնտակտային բիբեղ, 3. Զապանակ, 4. Զող, 5. Բեռան մետաղաճոպան, 6. Բեռ, 7. Մետաղաճոպան: